

ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկե Ժողովրդապետութիւններու

20 մայիս 2018

ԺԷ. Տարի

Թիւ 21

ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ : ՊԵՆՏԵԿՈՍՏԷ



ԺԱՄԱՄՈՒՏ

Քե՛զ կը դաւանիք իբր Աստուած եւ երկրպագութիւն կ'ընենք Քեզի, Սուրբ Հոգի՛, որ գոյութիւն ունեցող բոլոր Եակներուն կեանքի պատճառն ես եւ աշխարհին խաղաղութիւն պարգեւող, դուն որ աշակերտներուն տգիտութիւնը անսահման գիտութեամբ փոխարինեցիր եւ հրեղէն լեզուներու բաժնուելով՝ հրաշալի կերպով յայտնուեցար անոնց. կը պաղատիք, Տէր, ինչայէ՛ մեզի եւ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ԱԿ.

Ճշմարիտ Սուրբ Հոգին, որ մշտաշարժ աղբիւրէն, Որդիէն բխելով շարունակաբար, այսօր երկինքէն ուժգին կ'իջնէ Առաքեալներու դասերուն մեջ՝ ամենքը լիացնելով, օրհնենք զինքը երկրպագելով:

Որ անսկիզբ եւ միշտ «Է»-ն նոյնագոյ բնութեամբ անբաժան Որդիէն Արարչակից Սուրբ Յոգին այսօր կրակով բաժնուած քարոզիչ լեզուները մարդկային ցեղերը յայտնի դարձուց պեսապես շնորհքներ բաշխելով, օրհնենք զինքը երկրպագելով:

Որ ջուրերու վրայ ըլլալով արարածները գոյացուց, Յօրմէ եւ Որդիէն անբաժանը, իշխանակից Սուրբ Յոգին, այսօր վերածնաւ բոլոր ցեղերը կենդանի ջուր բխեցնելով Երուսաղէմի մէջ, օրհնենք զինքը երկրպագելով:

ՄԵՍԵՒԻ (Սաղ. 148,1 եւ 149, 1եւ150,1 եւ Դաւիթ 1)

Դո՛ւք, ո՛վ երկնքի բնակիչներդ, Տէ՛րը օրհնեցէ՛ք:

Նորանոր օրհնութիւններո՛վ փաբանեցէ՛ք Տէրը, հաւատարիմ հաւատացեալներու բազմութեան կողմէ իրեն օրհնութիւններ թո՛ղ բարձրանան:

Աստուած իր սրբավայրին մէջ օրհնեցէք, օրհնեցէ՛ք զինքը իր զօրութեան երկնային հաստատութեան մէջ:

Եղբայրներուս մէջէն ամենափոքրն էի ես, հօրս տան ամենէն կրտսերը եւ հօրս ոչխարները ե՛ս կ'արածէի:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՊԵՆՏԵԿՈՍԷ

Առաքեալներուն Գործերէն Է այս ընթերցուածը:
(Գ. Առք. 2, 1-21)

Ամենքը միասին մեկտեղ էին: Յանկարծ երկինքէն հնչիւն մը լսուեցաւ, նման սաստիկ հողմի եւ տունը, ուր նըստած էին՝ լեցուեցաւ: Եւ երեւցան անոնց բաժնուած լեզուներ, նման կրակի լեզուներու եւ իջան իւրաքանչիւր Առաքեալի վրայ: Ամենքը լեցուեցան Սուրբ Յոգիով եւ սկսան խօսիլ տարբեր լեզուներով, ինչպէս որ Յոգին խօսելու կարողութիւն կու տար անոնց: Երուսաղէմ կը բնակէին հրեայ երկիւղած մարդիկ, ամեն ազգէ որ կայ երկնքի տակ: Երբ այս ձայնը լսուեցաւ, բազմութեամբ եկան ու խռնուեցան տունին առջեւ, որովհետեւ իւրաքանչիւրը իր լեզուով կը լսէր անոնց խօսքը: Կը սքանչանային ամենքն ալ, կը զարմանային ու կ'ըսէին իրարու. «Միթէ ասոնք ամենքը, որ կը խօսին՝ Գալիլեացիներ չե՞ն եւ ի՞նչպէս կը լսենք զանոնք մեր մայրենի բարբառով՝ Պարթեւներ, Մարեր, Իլամացիներ, բնակիչներ Միջագետքի, Յրեաստանի, Կապադովկիայի, Պոնտոսի եւ Ասիոյ, Փռիւզիոյ, Պոմփիլիոյ, Եգիպտոսի, Լիբիոյ այն մասին որ մօտ է Կիւրենիոյ, Հռոմայեցիներ որ հոս կը բնակին, Հրեաներ եւ Հրեադաւաններ,



Կրտացիներ, Արաբներ, կը լսենք որ մեր լեզուներով կը հռչակեն Աստուծոյ սքանչելիքները»: Ամենքն ալ զարմացած էին ու շուարած՝ կ'ըսէին իրարու, թէ

«Ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա»: Ուրիշներ կ'ըսէին հեգնելով. «Անոյշ գիւնիով արբեցած ես»:

Պետրոս Տասմէկին հետ ոտքի կեցաւ եւ ըսաւ. «Յրեաներ եւ դուք ամէնքդ, որ կը բնակիք Երուսաղէմ, իմացէք ասիկա եւ մտիկ ըրէք իմ խօսքերս: Այս մարդիկը արբեցած չեն ինչպէս դուք կը կարծէք, քանի որ տակաւին օրուան երրորդ ժամն է, այլ ասիկա իրականացումն է Յովէլ մարգարէի խօսքին. Այն վերջին օրերուն, կ'ըսէ Աստուած, պիտի հեղում իմ Յոգի- եւ ամէն մարմինի վրայ եւ ձեր տղաներն

ու աղջիկները պիտի մարգարեանան: Ձեր երիտասարդները տեսիլներ պիտի տեսնեն եւ ձեր ծերերը երազներով պիտի երազեն: Եւ ես, այն օրերուն, իմ ծառաներուս եւ աղախիներուս վրայ պիտի հեղում իմ Յոգիս եւ անոնք պիտի մարգարեանան: Վերը երկինքի մէջ նշաններ ցոյց պիտի տամ, վարը՝ երկրի վրայ՝ արիւն, հուր եւ ծուխի մրրիկ: Արեւը պիտի փոխուի խաւարի եւ լուսինը՝ արեան, մինչեւ որ գայ Տիրոջ այն մեծ եւ երեւելի Օրը: Եւ ով որ Տիրոջ անունը կանչէ՝ պիտի փրկուի»:

Ալէլուիա, Ալէլուիա,

Ո՛վ Տէր, երկիրը ողորմութեանդ ցոյցերով լեցունեցաւ: Երկիրը դուն ստեղծեցիր եւ ան այնպէս գոյութիւն ստացաւ, եւ անոնց բոլոր ուժերը կը շարժին Անոր բերանին մէկ խօսքով:

(Սղմ. 118, 64,90)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔ

(Յովհ. 14, 25-31)

«Ասիկա ըսի ձեզի, մինչ ձեզի հետ էի: Իսկ Միսիթարիչը, Սուրբ Յոգին, զոր Յայրը պիտի դրկէ իմ անունովս, ամէն բան պիտի սորվեցնէ ձեզի, պիտի յիշեցնէ ինչ որ ըսած էի ձեզի: Խաղաղութիւնս կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի. զայն չեմ տար ձեզի, ինչպէս աշխարհը կու տայ: Թող ձեր սրտերը չխռովին ու չվախնան: Լսեցիք որ ըսած էի ձեզի, թէ ես կ'երթամ, սակայն դարձեալ կու գամ ձեզի: Եւ դուք եթէ սիրեիք

զիս՝ կ'ուրախանայիք որ ես Յօրս քով կ'երթամ, որովհետեւ Յայրը ինձմէ մեծ է: Այժմէն իսկ դէպքէն առաջ խօսեցայ ձեզի, որպէսզի երբ կատարուի, դուք հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ կու գայ իշխանը այս աշխարհին, եւ իմ վրաս իշխանութիւն չունի: Բայց հարկ է որ աշխարհը գիտնայ, թէ ես կը սիրեմ Յայրը եւ կը գործեմ ինչպէս որ Յայրը պատուիրեց ինձի»:

*** ՓԱՌՔ ՔԵՉ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ:**

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Յոգեգալուստ (Պենտեկոստէ)

Յոգեգալուստը (Պենտեկոստէն), Ս. Չատկէն յիսուն օր ետք՝ Ս. Յոգույն իջման յիշատակն է եւ Եկեղեցւոյ հիմնադրութեան տօնը:

Յոգեգալստեան տօնը, թէեւ Զրիստոսի անձին նուիրուած չէ, այլ Ս. Յո-

գիին, սակայն Տէրունական տօն նկատուած է, որովհետեւ Ս. Յոգին ալ Յիսուսի նման երկրիս վրայ մարդոց մէջ յայտնուեցաւ աղանիկ կամ կրակի ձեւով:

Յամբարձման պահուն, Յիսուս աշակերտներուն իմացուց իր մեկնումը

աշխարհէն եւ վերադարձը դէպի Հայր, եւ անոնց խոստացաւ ուղարկել Ս. Հոգին: Առաքելները Ս. Հոգւոյն շնորհքը ստանալէ ետք, զայն փոխանցեցին բոլոր անոնց, որոնք իրենց հետեւեցան եւ ապա մկրտուեցան: Համբարձումէն ետք, Եկեղեցին առանձին չմնաց, որովհետեւ Զրիստոս անոնց սրտերը Ս. Հոգւոյն զօրութեամբ լեցուց: Եկեղեցւոյ Հայրերուն համաձայն՝ Ս. Հոգին շնորհքի եւ իմաստութեան պարգեւիչն է եւ միսիթարիչը մարդկանց:

Այսօր՝ Ս. Հոգին կը շարունակէ Զրիստոսի վարդապետութիւնը ներգործել Եկեղեցւոյ մէջ: Յիսուս կը փափաքի որ Սուրբ Հոգին բոցավառէ մեր սրտերը, որպէսզի Աստուածային սերը աճելով, աշխարհի մէջ հաստատուի Աստուծոյ Արքայութիւնը: Եթէ մենք բացուինք Սուրբ Հոգւոյն, Ան մեզի պիտի տայ քաջութիւնը՝ քարոզելու Յիսուսի վարդապետութիւնը: Այսօր՝ Եկեղեցին կարիքն ունի Սուրբ Հոգւոյն օգնութեան, որպէսզի եկեղեցւոյ սպասաւորներն ու հաւատացեալները Սուրբ Հոգւոյն պարգեւներուն շնորհիւ՝ սիրով եւ խանդավառութեամբ նուիրին Աւետարանի հռչակումին, ի գին

ամէն զոհողութեան:

Զրիստոնեական առաջին դարերուն, հրեայ քրիստոնեաները, արդարութիւնը Օրէնքին պահպանումին մէջ կը տեսնէին եւ ոչ թէ՛ Զրիստոսի պարգեւած շնորհքներուն: Զրիստոսի պատգամը հասկնալու համար պէտք է պատրաստ ըլլանք ընդունելու Ս. Հոգւոյն շնորհքը: Աստուծոյ պատուիրանները ճշմարիտ են, եւ պէտք է անոնց հետեւինք, սակայն եւ այնպէս՝ գոյութիւն ունի մեծագոյն պարգեւ մը, որ Ս. Հոգւոյն շնորհքն է: Ս. Հոգին մղիչ ուժն է, որ Եկեղեցին յառաջ կը տանի, առանց անոր՝ Եկեղեցին կը թուլանայ:

Մեր կեանքին մէջ, պէտք է Ս. Հոգւոյն ներգործութեամբ առաջնորդուինք – ո՛չ թէ լոկ օրէնքի ձեւական գործարութեամբ: Ընդունելով Ս. Հոգին քրիստոնեային առջեւ առաքելութեան նոր հորիզոններ կը բացուին:

Յետեւաբար, Աստուածամօր բարեխօսութիւնը խնդրենք, որպէսզի Երկնաւոր Հօրմէն մեզի համար հայցէ Սուրբ Հոգւոյն շնորհքները, մեր սրտերը ջերմացնելու համար, թոյլ չտալով որ մենք՝ եկեղեցւոյ զաւակներս գաղջ ու տկար ըլլանք:

Ուխտի օր Կիրակի, 27 Մայիս 2018

Հայրապետական Ս. Պատարագ կը մատուցանէ
Ամեն. եւ Գերջ. Տեր Գրիգոր Պետրոս Ի.
Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Առաւօտեան ժամը 10.30-ին,
Զմմառու Յաւագին Տիրամօր Մայրավանքի շրջափակէն ներս



ՄԱՀԱՋԴ

Սեդրակ Մարտիրոսեան 15 Ապրիլ 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի
Աւետիս Գազայեի՝ 11 Մայիս 2018 - Ս. Փրկիչ եկեղեցի

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org